ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ ՀՈՒԼԻՍԻ 1-4-Ը ԼԵՀԱՍՏԱՆ
(Ք.ՎԱՐՇԱՎԱ)
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Ժենյա Տեր-Վարդանյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի պետ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2024թ հուլիսի 1-4-ը Լեհաստան (Ք.Վարշավա)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

EASA (EUROPEAN AVIATION SAFETY AGENCY) ԵՄ ավիացիոն անվտանգության գործակալություն

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

Թռիչքների հետ կապված ռիսկերի գնահատման գիտելիքների ու հմտությունների ձևավորում, ռիսկերի կառավարման առաջադեմ գործիքակազմի ձեռքբերում:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարի 2024 թվականի փետրվարի 1-ի Հ/13-Լ-2024 հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» լրամշակում:

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Քննարկվել են ռիսկերի կառավարման գործընթացները, ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները, պետական մարմինների կողմից օդային տարածքի ռիսկերի գնահատման նպատակով որոշումների կայացման գործընթացները:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Հանդիպման ընթացքում քննարկվել են կոնֆլիկտային գոտիներով կամ մոտակայքում թռիչքների առջև ծառացած ռիսկերը: Ավիացիոն կազմակերպությունների, պետական մարմինների և ապահովագրողների կողմից ձեռնարկվող քայլերը՝ կոնֆլիկտային գոտիների և այլ օդային տարածքներով կամ մոտակայքում գտնվող թռիչքների հետ կապված ռիսկերի նվազեցման վերաբերյալ, ԻԿԱՕ թիվ 10084 փաստաթղթի ուժեղ կողմերի, ինչպես նաև թույլ կողմերի վերհանում, ինչպես նաև օրակարգում ներառված այլ հարցեր:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

ԻԿԱՕ թիվ 10084 փաստաթղթի լրամշակում, ավիացիոն կազմակերպությունների և պետական մարմինների ավելի սերտ համագործակցություն՝ ռիսկերի նվազեցման նպատակով:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարի 2024 թվականի փետրվարի 1-ի Հ/13-Լ-2024 հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» լրամշակում:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

08.07.2024թ.